



ՍԵՐՉԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի պրոֆեսոր,
աշխարհագրական գիտությունների դոկտոր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեծ Հայքի 10-րդ նահանգը՝ Արցախը, 70 տարի Ադրբեջան կոչվող՝ ընդամենը 1918 թ. շինծու ստեղծված նորայուս հանրապետության ճիրաններից համայն հայության ընդհանուր ուժերով ազատագրվեց 1991 թ. սեպտեմբերի 2-ին և հռչակվեց որպես անկախ պետություն: Անկախությունից անմիջապես հետո Արցախի բնակչությունը մայր Հայաստանի աջակցությամբ շատ արագ կազմակերպեց իր իշխանական բոլոր մարմինները, ընտրեց Նախագահ, Ազգային ժողով, կազմեց Կառավարություն, իրավական մարմիններ և պաշտպանական հզոր բանակ:

Ստեղծված պետական մարմինները արագորեն ձեռնամուխ եղան Արցախի թուրք-ազերիների կողմից բարբարոսաբար քարոքանդ արված տնտեսության բոլոր ճյուղերի, բնակավայրերի վերականգնման և զարգացման հույժ կարևոր գործին:

Այսօր արդեն Արցախի սոցիալ-տնտեսական բոլոր բնագավառները ոչ միայն հստակ ձևավորված են, այլև արագորեն զարգանում են:

Արցախը ներկայում, որպես պետություն, հետաքրքրություն է ներկայացնում շատ երկրների դեկավարների, գիտնականների, արվեստագետների, նաև մեծ թվով զբոսաշրջիկների համար:

Հիմնաբառեր Արցախ, Ղարաբաղ, անկախություն, պետականություն, քաղաքական անվտանգություն, հանրապետություն, ռեսուրսներ, շրջակա միջավայր, տարածքային զարգացում

R11, R13, L59, Q28, Q51, Q56

Հազարամյակների պատմություն ունեցող Հայաստանի 10-րդ նահանգը՝ ազատատենչ Արցախ-Ղարաբաղը, համայն հայության հերոսական ջանքերով 1991 թ. սեպտեմբերի 2-ին վերջնականապես ազատագրվեց Ադրբեջանի 70 տարվա գաղութային լծից և հռչակվեց անկախ:

Այսպիսով՝ 1916 թ. սեպտեմբերին լրանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության 25-րդ տարին: Դա նշանակում է, որ աշխարհի քաղաքական քարտեզի վրա, փաստորեն, ձևավորվել է հայկական երկրորդ պետականությունը՝ ԼՂՀ-ն: Թեև այն դեռևս ճանաչված չէ, սակայն աշխարհի շատ երկրների ղեկավարներ, պետական գործիչներ, կազմակերպություններ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Արցախ-Ղարաբաղի նկատմամբ, այցելում են այնտեղ, հանդիպումներ ունենում Արցախի պաշտոնյաների, Ազգային ժողովի պատգամավորների, բնակչության հետ և իրենց երկիր վերադառնալուց հետո հիացմունքով են արտահայտվում անկախացած Ղարաբաղ աշխարհի պետականության, կառավարման, բնակչության կազմակերպվածության, հյուրընկալության, բնության գեղեցկության, պատմաճարտարապետական հնագույն ու եզակի կոթողների վերաբերյալ: Տարեցտարի զգալիորեն մեծանում է Արցախ այցելող արտասահմանցի զբոսաշրջիկների թիվը: Ի դեպ, զգալի են դարձել նաև արվեստի հանրահայտ գործիչների այցելությունները, ովքեր մեծ տպավորություն են ստանում Արցախի բնակչության՝ արվեստի նկատմամբ ունեցած հետաքրքրությունից և վերաբերմունքից:

ԼՂՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է, մայրաքաղաքը Ստեփանակերտն է, պետական լեզուն՝ հայերենը: ԼՂՀ ազգային արժույթը հայկական դրամն է, որը շրջանառության մեջ է դրվել 1993 թ. նոյեմբերին: ԼՂՀ նախագահը երկրի անկախության, տարածքային ամբողջականության, անվտանգության երաշխավորն է, օրենսդիր իշխանությունը Ազգային ժողովն է, գործադիր իշխանությունը՝ Կառավարությունը:

ԼՂՀ-ն ունի հիմնական օրենք՝ սահմանադրություն, օրհներգ, զինանշան, դրոշ, պաշտպանական բանակ:

Տարածական առումով ԼՂՀ-ն զբաղեցնում է պատմական Հայաստանի Արցախ նահանգի լեռնային մասը:

Լեռնային Ղարաբաղն ընդգրկում է հազարամյակների պատմություն ունեցող Արցախ աշխարհի հարավարևմտյան լեռնային մասում վաղուց ձևավորված հայկական հինգ իշխանությունների՝ Խամսայի մելիքությունների տարածքի հիմնական մասը: Ադրբեջանա-թուրքական գաղութարարների, Ստալին-Նարիմանով հակահայկական պլաններով Արցախը մայր Հայաստանից բռնանջատելուց հետո, 1923 թ. կազմավորված ինքնավար մարզի կազմի մեջ կանխամտածված ձևով չմտցվեց Լեռնային Ղարաբաղի հյուսիսային՝ Գյուլիստանի մելիքության տարածքը, ինչպես նաև Դիզակի, Ջրաբերդի մելիքությունների լեռնային ու դաշտային հատվածների զգալի մասը:

Հազարամյակների ընթացքում թշնամիների դեմ հերոսական պայքարով իր անկախությունը պահպանած, Հայաստանի անբաժանելի մասը կազմող Արցախն ավելի դժվարին կացության մեջ հայտնվեց Անդրկովկասում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո՝ այս անգամ կարմիր բանակի գեներալ և թաթար-ադրբեջանական մուսավաթական միացյալ ուժերով:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում Ստալինի վարած հակահայկական քաղաքականության, ազգամիջյան, տարածական-վարչական հարցերի խիստ սուբյեկտիվ լուծման հետևանքով Արցախ-Ղարաբաղ հայկական աշխարհը հայտնվեց ծանր իրավիճակում:

1918 թ. մայիսին Բաքվում ստեղծվեց մուսավաթական կառավարություն: Այսպես սկսվեց Ադրբեջան կոչվող հանրապետության պատմությունը: Մինչ այդ նման պետություն գոյություն չի ունեցել: Անդրկովկասի արևելյան մասում XII – XIII դարերից հետո այստեղ հանգրվանած քոչվոր թաթարների հետնորդների այդ հետադիմական, ազգայնամուլական կառավարությունը հենց առաջին օրերից սկսեց վարել խիստ հակահայկական քաղաքականություն: Մուսավաթական Ադրբեջանը ռազմատենչ վայրի ցեղերին յուրահատուկ բուլոր մեթոդները կիրառում էր հայերի դեմ՝ ձգտելով իր ազդեցությունը տարածել նաև Արցախ-Ղարաբաղ հայկական նահանգի վրա: Ղարաբաղի հայությունն այս անգամ էլ հերոսաբար պայքարում էր իր անկախությունը պաշտպանելու համար և ստեղծում սեփական կառավարման տեղական մարմիններ: Սակայն Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությամբ մեծ փոփոխություններ են կատարվում նաև Անդրկովկասում: 11-րդ կարմիր բանակի գեներալ ռեժիմ 1920 թ. ապրիլին Բաքվում տապալվում է մուսավաթական կառավարությունը, և ստեղծվում է Ադրբեջանական Խորհրդային Հանրապետություն:

Ի դեպ, «Ադրբեջան», «ադրբեջանցի» հասկացությունները հենց այդ տարիներից են գործողության մեջ դրվել: Այժմյան Ադրբեջանի տարածք թափանցած (միջին Ասիայից) մահմեդականները մինչև 1930-ական թվականները բոլոր աղբյուրներում կոչվել են թաթարներ: Խորհրդային Ադրբեջանն էլ մուսավաթական կառավարության սկզբունքներով հակահայկական քաղաքականություն էր վարում՝ բոլոր մեթոդներով ձգտելով զավթել Արցախ-Ղարաբաղը: Իսկ այդ ժամանակ Հայաստանում դեռ խորհրդային կարգեր չէին հաստատվել, և Ղարաբաղի հայությունը շարունակում էր պայքարը գերիշխանության դեմ: 11-րդ կարմիր բանակի ռեժիմով 1920 թ. նոյեմբերին խորհրդային կարգեր հաստատվեցին նաև Հայաստանում: Իրեն աշխարհի առաջին «սոցիալիստական» հայտարարած լենինյան ազգային՝ իբր արդարացի քաղաքականություն վարող խորհրդային իշխանության պայմաններում, թվում էր, թե առանց խոչընդոտների Հայաստանն իր անբաժանելի մասերը կազմող Արցախի ու Նախիջևանի հետ պետք է ստեղծեր միասնական հանրապետություն: Դժբախտաբար, այդ բոլորը դառն խաղեր էին հայ ժողովրդի համար: Սկսվում է Արցախ-Ղարաբաղի վարչական ենթակայության արհեստականորեն՝ բոլշևիկների կողմից ստեղծված «հիմնահարցի» լուծման քաշքշուկը, որը ձգձգվում է առ այսօր:

1921 թ. հուլիսի 4-ին Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Կենտկոմի Կովկասյան բյուրոն, ծայրերի մեծամասնությամբ, որոշում է Լեռնային Ղարաբաղը միացնել Խորհրդային Հայաստանին: Սակայն հաջորդ օրը՝ 1921 թ. հուլիսի 5-ին, Ի.Ստալինի ու Ն.Նարիմանովի կամայականությամբ, ահաբեկումներով, առանց քվեարկության, որոշում են Լեռնային Ղարաբաղը ներառել Ադրբեջանի կազմում:

Այսպիսով՝ մայր երկրից բռնի կերպով պոկվեց նրա՝ 97%-ով հայաբնակ մասը՝ Արցախ-Ղարաբաղը: Բնականաբար, այդ հանգամանքը խիստ բացասական ազդեցություն ունեցավ վերջինիս հետագա ճակատագրի վրա:

Շուրջ յոթանասուն տարի, կոմունիստական ռեժիմի պայմաններում, թույլ չէր տրվում մայր Հայաստանում Ղարաբաղի մասին նույնիսկ խոսել, առավել ևս՝ գրել: Մինևույն ժամանակ, Ադրբեջանը ժողովուրդների լենինյան «բարեկամության» դրոշի ներքո, Նախիջևանի օրինակով, աննկատ Արցախ-Ղարաբաղը հայաթափում էր:

Տնտեսական առումով, հայկական այդ բարեբեր երկրամասը դարձել էր Ադրբեջանին գյուղատնտեսական հումք (հացահատիկ, միս, կաթ, բուրդ, բոժոժ, ձու, խաղող, պտուղներ, բանջարեղեն) մատակարարող խոշոր բազա: Թույլ չէր տրվում մարզում կառուցել գյուղատնտեսական հումքի վերամշակման ձեռնարկություններ: Այսպիսով՝ մարզը թեև գյուղատնտեսական հումքի խոշոր արտադրող էր, բայց նրա բնակչությունը հնարավորություն չուներ տեղի խանութներից գնելու սննդամթերք, արդյունաբերական արտադրանք:

Գյուղատնտեսության արտադրանքի ավելացման գործում գաղութարարները, այսպես կոչված, «խրախուսման» խորամանկ քաղաքականություն էին վարում. բարձր բերք ստանալու համար ժամանակ առ ժամանակ մեղալներ և շքանշաններ էին տալիս հայերին:

Մարզում շինարարական աշխատանքները բարձրորդի վիճակում էին: Կանխամտածված ձևով անուշադրության էր մատնված հատկապես ճանապարհաշինությունը:

Տրանսպորտային կապն այնպես էր մշակված, որ դրսից Ղարաբաղի ցանկացած բնակավայր գնալու համար անպայման պետք էր անցնել սահմանի ամբողջ երկայնքով տեղադրված, ադրբեջանցիներով բնակեցված քաղաքներով՝ Աղդամ, Միր-Բաշիր, Ֆիզուլի, Լաչին, Եվլախ, Կիրովաբադ և այլն:

1988 թ. սկսված իրադարձությունները ցույց տվեցին, որ ադրբեջանական գաղութակալների այդ հեռահար քաղաքականությունը նախօրոք մտածված է եղել. այդպես նրանք ցանկացած ժամանակ կարող էին (և հաճախակի անում էին) տնտեսական մեկուսացման ենթարկել Արցախը:

Մարզում չկային տնտեսական պայմաններ, այդ պատճառով հատկապես երիտասարդությունը ստիպված էր լինում հեռանալ հարազատ օջախից: Ղատարկվում էին երբեմնի շեն բնակավայրերը, փակվում դպրոցները: Հայոց լեզուն, հայ ժողովրդի պատմությունը դուրս էին մղվում ուսումնական ծրագրերից և առօրյա կյանքից: Ղարաբաղում, փաստորեն, արագորեն աճում էր ադրբեջանցիների տեսակարար կշիռը, արհեստականորեն ստեղծվում էին ադրբեջանական գյուղեր: Արցախի զինանիշը համարվող սքանչելի, ամբողջապես հայաբնակ Շուշի քաղաքը, որը Անդրկովկասի կրթական, մշակութային հանրահայտ կենտրոնն էր, 1918–20 թթ. ազերիների կողմից ավերվելուց հետո գրեթե ամբողջությամբ հայաթափվել էր:

Հիրավի, հազարամյակների պատմություն ունեցող հայկական այդ երկրամասն աստիճանաբար հայաթափվում էր, իսկ Խորհրդային Հայաստանի կոմունիստական ղեկավարությունն այս ամենի հանդեպ կարծես թե անտարբեր էր: Ջարմանալի է, որ յոթանասուն տարվա ընթացքում Խորհրդային Հայաստանի բարձրաստիճան ղեկավարներից և ոչ մեկը չի այցելել ականավոր մարշալներ, ծովակալներ, գեներալներ, Սովետական Միության բազում հերոսներ, մեծ թվով հանրահայտ գիտնականներ տված այդ ինքնավար մարզ:

Ջարմանալի է նաև, որ մինչև 1960-ական թվականները Արցախի նկատմամբ անտարբեր էր նաև Հայաստանի մտավորականությունը, իսկ տեղի հայրենասեր մտավորականության ծայրը գաղութարարները խլացնում էին բոլոր մեթոդներով:

Քանի որ մայր Հայաստանում թույլ չէր տրվում Արցախ-Ղարաբաղի մասին խոսել ու գրել, հայ նոր սերունդը պատկերացում չուներ Արցախի պատմության, առավել ևս Լեռնային Ղարաբաղի խորհրդային շրջանի կյանքի մասին:

Հայ մտավորականությանը, անկասկած, հայտնի է ականավոր պատմաբան, Արցախի մեծ գավակ Լեոյի «Հայոց պատմության» երրորդ հատորի երկ-

րորդ գիրքը, որ ամբողջապես նվիրված է Արցախ-Ղարաբաղի պատմությանը: Հանրահայտ են նաև Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի «Արցախ», Րաֆֆու «Խամսայի մելիքությունները», Երվանդ Լալայանի «Վարանդա» արժեքավոր աշխատությունները: Բայց դրանք գրվել են նախորդ դարի վերջերին: Այնուհանդերձ, մինչև 1988 թ. ղարաբաղյան ազատագրական շարժումների սկիզբը, Հայաստանում, թեև դժվարությամբ, այնուամենայնիվ, հրատարակվեցին Բագրատ Ուլուբաբյանի «Խաչենի իշխանությունները X–XVI դարերում» (1975 թ.), «Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության» (1981 թ.), «Գանձասար» (1982 թ.) գրքերը: Լույս տեսան նաև տողերիս հեղինակի «Լեռնային Ղարաբաղ» (1990 թ.), «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» (1997 թ. արժանացել է ԼՂՀ Կառավարության Եղիշեի անվան մրցանակի), «Արցախ-Ղարաբաղ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» (2011 թ.), այլ մենագրություններ՝ նվիրված անկախացած Արցախին:

Քանի որ Ադրբեջանի տիրապետության տարիներին Լեռնային Ղարաբաղի, ցավոք, նաև Հայաստանի Հանրապետության դպրոցներում չեն դասավանդվել Արցախի աշխարհագրությունը, պատմությունը, չեն գրվել համապատասխան դասագրքեր, ապա մեր ներկա սերունդը շատ աղուտ պատկերացում ունի այդ հերոսական երկրամասի մասին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը 11,5 հազ. կմ² է: Մակերևույթը տիպիկ լեռնային է: Ընդգրկում է Ղարաբաղի բարձրավանդակի արևելյան հատվածը և արևմուտքից թեքությամբ իջնելով դեպի արևելք՝ ծովվում Կուր-Արաքսյան ընդարձակ հարթավայրի մեծ մասը կազմող Արցախի դաշտավայրին:

Լեռնային Ղարաբաղի տարածքի՝ ծովի մակարդակից միջին բարձրությունը 1100 մ է (Հայաստանի Հանրապետության միջին բարձրությունն ավելի քան 1800 մ է): Ի տարբերություն Սյունիքի ու Հայաստանի Հանրապետության մյուս մասերում գտնվող լեռների (որոնք հիմնականում անտառազուրկ են), Արցախ-Ղարաբաղի լեռներն անտառածածկ են: Երկրաբանական առումով Արցախի տարածքն անբավարար է հետազոտված: Այն ծածկված է հրաբխային կոնաձև ու բրգաձև հիասքանչ լեռնակուտակումներով, որոնք պարունակում են երկրակեղևի բոլոր շերտերը:

Հանրահայտ երկրաբաններ Հերման Աբիխի ու ֆրանսիացի Պիեռ Բոնեի ուսումնասիրություններում նշված է, որ Ղարաբաղի լեռնաշխարհում բազմատեսակ ապարների հետ մեծ տեղ են զբաղեցնում հրաբխային բազմերանգ տուֆերը: Ընդհանուր առմամբ, Արցախի երկրաբանական կառուցվածքը շատ ընդհանրություններ ունի Զանգեզուր-Ղարալազյազի հետ:

Արցախի կլիմայական պայմանները համեմատաբար մեղմ ու չափավոր են: Այստեղ օդի տարեկան միջին ջերմաստիճանը 10,5⁰C է (Հայաստանի Հանրապետությունում՝ 13,8⁰C):

ԼՂՀ տարածքում երկարատև սառնամանիքներ հիմնականում չեն լինում: Ցածրադիր վայրերում բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է մինչև -16⁰C-ի, բարձրլեռնային վայրերում՝ մինչև -23⁰C-ի, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է 40⁰C-ի: Հայաստանի Հանրապետության տարածքում բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -46⁰C է, բացարձակ առավելագույնը՝ 42⁰C:

Այս առումով, Լեռնային Ղարաբաղի բնական պայմանները բավական արդյունավետ են տնտեսության զարգացման համար, և եթե դրանք (ռելիեֆային, կլիմայական, հողային, հանքային, ջրային և այլ ռեսուրսներ) օգտա-

գործվեն ժամանակակից գիտաարդյունաբերական մեթոդներով, ապա արդեն 25 տարվա անկախություն ունեցող հանրապետության տնտեսության ցուցանիշները շատ ավելի բարձր կարող են լինել: Իսկ դա նշանակում է նաև, որ ազերի թուրքերի դեմ մեր դիմակայությունը ոչ միայն ավելի հաստատուն կլինի, այլև հնարավորություն կունենանք թշնամու ազդեցության տակ մնացած տարածքները, բնակավայրերը վերադարձնել:

Անտառներ կան ԼՂՀ բոլոր շրջաններում, բայց ավելի անտառաշատ է Մարտակերտի շրջանը, որին բաժին է ընկնում երկրի անտառային տարածքի 54%-ը, Ասկերանի շրջանին՝ 24%-ը, Հադրութի շրջանին՝ 16%-ը¹: Անտառների ընդհանուր տարածքը 533,2 հազ. հա է²:

ԼՂՀ նախալեռնային և լեռնային վայրերում զգալի տարածություններ են զբաղում սևահողերը, անտառային վայրերում՝ մուգ դարչնագույն, պողզուլային հողատեսակները, գետահովտային ցածրադիր մասերում՝ հզոր շերտերով նստվածքային հողերը, որոնք բնութագրվում են բարձր բերքատվությամբ: Այդ առումով հատկապես արժեքավոր են Թարթառ, Խաչեն, Կարկառ, Խոնաշեն, Իշխանագետ, Հազարու գետերի հարթավայրային ավազանների հողերը: Վերջին տվյալներով ԼՂՀ հողային ֆոնդը կազմում է 1145,8 հազ. հեկտար. գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 538,3 հազ. հեկտար, որից վարելահողերը՝ 148,8 հազ. հեկտար³:

ԼՂՀ տնտեսության համար, անկասկած, վճռական դեր են խաղում ջրային ռեսուրսները: Այստեղ մթնոլորտային տեղումները, միջին հաշվով, տարեկան կազմում են 580 մմ: Դա նշանակում է՝ ԼՂՀ տարածքում տարեկան գոյանում է ավելի քան 2530 մլն մ³ ջուր (ՀՀ տարածքում՝ 18 մլրդ մ³ ջուր): Այդ ծավալից 1390 մլն մ³-ը, այսինքն՝ 55%-ը գոլորշիանում է, իսկ մյուս մասը՝ 1140 մլն մ³-ը, առաջացնում է մակերեսային և ստորերկրյա հոսք: Փաստորեն, ԼՂՀ-ն, ՀՀ-ի ու Ադրբեջանի համեմատությամբ, մեկ շնչի և 1² կմ տարածքի հաշվով, ջրային ռեսուրսներով անհամեմատ ավելի լավ է ապահովված⁴:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԼՂՀ տարածքը բավական հարուստ է նաև մետաղային ու ոչ մետաղային բազմազան հումքատեսակներով, սակայն, ցավոք, ինչպես արդեն նշել ենք, այս տարածքը, երկրաբանական-հետախուզական առումով, անբավարար է հետազոտված:

Հանքային վառելիքի տեսակներից հայտնաբերված են քարածխի պաշարներ Մարտակերտի շրջանի Մաղավուզ, Նարեշտար, Քոյատակ, Մեծ շեն գյուղերի շրջանում:

Մետաղային հանքային հանածոներից այստեղ հնուց հայտնաբերված են բազմամետաղների, հատկապես՝ ցինկի, կապարի, պղնձի, ոսկու, ծծմբային կոլչեդանի, երկաթի հանքավայրեր, երևակումներ: Այս առումով, հատկապես նշանավոր է Մարտակերտի շրջանը՝ Թարթառ և Խաչեն գետերի միջև ընկած տարածքը: Մասնավորապես՝ հանրահայտ է Մեհմանա գյուղի մոտ գտնվող բազմամետաղների հանքավայրը, որը համեմատաբար լավ է ուսումնասիրվել «Հայգունմետաղնախագիծ» ինստիտուտի կողմից դեռևս տասնամյակներ առաջ կազմված տեխնիկատնտեսական հիմնավորմամբ: Այդպիսի հանքանյութի երևակում է հայտնաբերված նաև Շահունյանի շրջանում (Բուզլուխից հարավ):

¹ Տե՛ս Ս. Մելքունյան, Արցախ-Ղարաբաղ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Եր., 2011 թ., էջ 19:

² Տե՛ս նույն տեղը, էջ 20:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 19:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 21:

Պղնձի ու այլ գունավոր մետաղների (այդ թվում՝ ոսկու) հանքախմբեր, երևակումներ, հանքավայրեր կան Դրմբոն, Գյուլաթաղ, Կուսապատ, Վանք, Ղազանչի, Լիսագոր, Ջարդանաշեն, Մեծ թաղեր գյուղերի մոտ, ինչպես նաև Հաթերքից դեպի հյուսիս՝ Մռավ սարի լանջերին:

ԼՂՀ տարածքը թշնամուց ազատագրելուց հետո բավական ժամանակ է, ինչ Դրմբոն գյուղի մոտ կառուցված լեռնահանքային խոշոր կոմբինատը պղինձ, ոսկի ու գունավոր այլ մետաղներ է արդյունահանում, հարստացնում, և հարստացված հումքը ուղարկվում է Ալավերդու պղնձածուլակյան կոմբինատ՝ վերամշակելու, պատրաստի արտադրանք թողարկելու համար:

Ծծմբային կոլչեդանի ու այլ մետաղների պաշարներ կան Մարտակերտի շրջանի Հարությունագոմեր, Վանք, Գյուլաթաղ, Կուսապատ գյուղերի մոտ: Արցախ-Ղարաբաղի տարածքը հարուստ է նաև ոչ մետաղային ռեսուրսներով, մասնավորապես՝ շատ են մարմարի, կրաքարի պաշարները: Առավել հանրահայտ է Ստեփանակերտից փոքր հեռավորության վրա գտնվող Հարավ գյուղի մոտ գտնվող մարմարի հանքավայրը, որտեղ մարմարի շերտի հզորությունը հասնում է հարյուրավոր մետրերի, ունի արդյունաբերական նշանակություն: Այս հանքավայրի մարմարը վարդագույն է, լայնորեն օգտագործվում է հատուկ շենքերի և հուշարձանների կառուցման համար:

Մարտակերտի շրջանը հարուստ է տուֆի պաշարներով: Վարդագույն տուֆով Վանք գյուղի մոտ 13-րդ դարում կառուցվել է Գանձասարի վանքը, որն իր ճարտարապետական տեսքով շատ մեծ հետաքրքրություն է ներկայացնում, և ամեն օր այստեղ կարելի է տեսնել արտասահմանյան երկրներից ժամանած զբոսաշրջիկների:

Առկա հողային, անտառային, ջրային, մետաղային, ոչ մետաղային ու մյուս բնական ռեսուրսների խնայողաբար, համալիր օգտագործման դեպքում ԼՂՀ տնտեսությունը կարող է զարգանալ և դառնալ արտաքին տնտեսական ակտիվ կապեր ունեցող հանրապետություն:

2014 թ. տվյալներով ԼՂՀ համախառն ներքին արդյունքը կազմել է 188840,3 մլն դրամ⁵: Ի դեպ, համեմատության համար նշենք, որ 2007 թ. նշված ցուցանիշն ընդամենը 70791,0 մլն դրամ էր:

Առայժմ ԼՂՀ համախառն ներքին արդյունքում որոշ չափով գերազանցում է գյուղատնտեսության արտադրանքը. 2014 թ. տվյալներով կազմում է 57314,6 մլն դրամ, իսկ արդյունաբերության տեսակարար կշիռը՝ 52046,8 մլն դրամ⁶:

Քանի որ արդյունաբերության խոշորագույն ճյուղը (լեռնահանքային արդյունաբերություն) անկախությունից հետո է սկսել զարգանալ, ուստի մոտակա տարիներին, մեր կարծիքով, ազատագրված Արցախը հիմնականում կունենա արդյունաբերական զարգացման ուղղություն:

ԼՂՀ արդյունաբերության հիմնական կենտրոնը Ստեփանակերտն է, որտեղ, 2014 թ. տվյալներով, համապատասխան արտադրանքի ծավալը կազմել է 25393,0 մլն դրամ, հաջորդը Մարտակերտի շրջանն է (լեռնահանքային արդյունաբերություն), որտեղ արտադրանքի ծավալը հասել է 15959,1 մլն դրամի⁷:

Լեռնահանքային արդյունաբերության արտադրանքից բացի ԼՂՀ-ում թողարկվում են սննդամթերքի, թեթև արդյունաբերության ապրանքների բազում

⁵ Տե՛ս ԼՂՀ ԱԿԾ, ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թ., էջ 4:

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 13:

տեսակներ, խմիչքներ, պահածոներ, ինչպես նաև գորգեր, կարպետներ, տեքստիլ արտադրանք, հագուստեղեն, կոշիկեղեն, նաև մետաղե արտադրատեսակներ, էլեկտրասարքավորումներ, կահույքի, շինանյութի տեսակներ և այլն:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում ԼՂՀ յոթ վարչական շրջաններից առաջին տեղը, 2014 թ. տվյալներով, զբաղեցնում է Ասկերանի շրջանը, որին բաժին է ընկնում ամբողջի 23,3%-ը, հաջորդը Քաշաթաղի շրջանն է՝ 21,3%, Մարտունու շրջանը՝ 19,7%, Մարտակերտի շրջանը՝ 15,2% և այլն⁸:

ԼՂՀ գյուղատնտեսության հիմնական արտադրատեսակներն են՝ հացահատիկ, կարտոֆիլ, բանջարեղեն, բոստանային և կերային մշակաբույսեր, պտուղներ, խաղող, թուփ, կաթ, միս, ձու և այլն:

Ղարաբաղյան թթի օդին իր որակական հատկանիշներով համաշխարհային շուկայում յուրահատուկ տեղ է գրավում:

Այժմ ԼՂՀ խաղողի այգիների տարածքը 2017,2 հեկտար է, թթի այգիներինը՝ 868,5 հեկտար (նախկինում կրկնակի շատ էր), որից 616,5 հեկտարը Մարտունու շրջանում է:

ԼՂՀ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 23532 է (1914 թ.), խոզերի գլխաքանակը՝ 12855, ոչխարներինը՝ 113089, թռչուններինը՝ 342614 (ի դեպ, 1960-ական թվականներին մանր եղջերավոր անասունների գլխաքանակը 275-300 հազ. էր):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԼՂՀ գյուղատնտեսության զարգացման նախապայմանները, Հայաստանի Հանրապետության համեմատությամբ, ավելի նպաստավոր են: Հետևաբար՝ այդ պայմանները գիտականորեն արդյունավետ օգտագործելու դեպքում ԼՂՀ-ն կարող է զգալի քանակությամբ գյուղատնտեսական արտադրանք արտահանել ոչ միայն մայր Հայաստան, այլև արտասահմանյան երկրներ:

Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունն իր հացահատիկի պահանջի 40-50%-ը ներմուծում է աշխարհի հեռավոր երկրներից: Մեր կարծիքով՝ ԼՂՀ սևահողային ընդարձակ տարածքները ժամանակակից գիտական մեթոդներով օգտագործելու դեպքում հնարավոր կլինի ՀՀ հացահատիկի պահանջի զգալի մասը բավարարել ԼՂՀ-ից:

Վստահ ենք, որ, բոլոր առումներով, խիստ անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական միասնացման գործընթացի կատարելագործումն ու ընդլայնումը: Կարծում ենք՝ հույժ կարևոր է ուշադրությունը սևեռել ԼՂՀ տնտեսության զերակա ուղղություններում ինտեգրման խնդիրներին՝ հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ մենք, փաստորեն, Ադրբեջանի հետ դեռևս գտնվում ենք պատերազմական պայմաններում:

Ինչպես արդեն նշվել է, ԼՂՀ տարածքում հայտնաբերվել են գունավոր մետաղների մի շարք հանքավայրեր:

ԼՂՀ տնտեսության համար խոշոր նշանակություն կարող են ունենալ նաև Մարտակերտի շրջանի Մեհմանայի բազմամետաղների ու այլ գունավոր մետաղների հանքավայրերը:

ԼՂՀ տարածքին շատ մոտ՝ ՀՀ-ում վաղուց գործում են հանքահարստացուցիչ հինգ խոշոր ձեռնարկություններ: Ըստ որում, հեռանկարում Սյունիքի

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 16:

մարզի լեռնամետալուրգիական ձեռնարկությունների համար լրացուցիչ հումքային բազա կարող են դառնալ Մարտակերտի շրջանի պղնձի, մոլիբդենի, բազմամետաղների, Հադրութի շրջանի պղնձի հանքավայրերի խմբերը: Դրանց օգտագործումը ՀՀ-ում վաղուց ձևավորված գունավոր մետալուրգիայի համալիրում նպատակահարմար է՝ պայմանավորված հանքահարստացուցիչ ֆաբրիկաների, պղնձածուլական, մոլիբդենի խոշոր կոմբինատի, դրանց արտադրական փորձի, գիտական ու նախագծային համապատասխան կազմակերպությունների, որակյալ բանվորների և մասնագետների առկայությամբ:

ՀՀ-ում ԼՂՀ տարածքի գունավոր մետաղների պաշարների օգտագործման փայլուն օրինակ է Դրմբոնի (Մարտակերտի շրջան) կոմբինատի շահագործումը, որտեղ արտադրված պղնձի ու գունավոր այլ մետաղների խտանյութը մշակվում է Ալավերդու պղնձածուլական գործարանում:

Նպատակահարմար կլինի ավելի խորացնել ԼՂՀ և ՀՀ լեռնահանքային արդյունաբերության ոլորտների այսպիսի միասնացումը՝ հետագայում ԼՂՀ-ում ապահովելով լրիվ կենսապարբերաշրջանով արտադրության կազմակերպումը:

Մեքենաշինության, շինանյութերի, թեթև ու սննդի արդյունաբերության բնագավառներում ԼՂՀ զարգացման համար կարևորագույն նշանակություն կարող է ունենալ ՀՀ մեծ փորձի ու գիտագործնական հնարավորությունների օգտագործումը:

Միասնացման մյուս ուղին ԼՂՀ-ում Հայաստանի մեքենաշինական, թեթև, սննդի արդյունաբերության առավել առաջատար, սակավ հումքատար ու էներգատար, բայց աշխատատար գործընթացներ ունեցող ձեռնարկությունների մասնաձյուղերի ստեղծումն է:

ՀՀ պանրագործության կատարելագործված մեթոդները կարելի է արմատավորել ԼՂՀ-ում, որտեղ պանրի արտադրության համապատասխան նախապայմաններն անհամեմատ բարենպաստ են: ԼՂՀ կաթի արտադրության բազան թույլ կտա կազմակերպել պանրի այնպիսի հզոր արտադրություն, որն ապագայում հնարավորություն կստեղծի արտահանելու մինչև 10 հազ. տ բարձրորակ արտադրանք:

Թեև հայկական երկու հանրապետությունների կրթական համակարգերը հիմնականում ինտեգրված են, սակայն խիստ անհրաժեշտ է նաև բուհական և գիտահետազոտական համակարգերի լիարժեք միասնացումը, որակյալ մասնագետների օգտագործումը:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի 25-ամյա անկախացման ժամանակաշրջանում հայկական երկու հանրապետությունների տնտեսությունների ինտեգրման գործընթացը կշարունակվի նաև ապագայում:

Օգտագործված գրականություն

1. Մելքունյան Ս., Արցախ-Ղարաբաղ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, 2011:
2. Մելքունյան Ս., Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր., 2005:
3. ԼՂՀ ԱՎԾ, ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2014:

СЕРГЕЙ МЕЛКУМЯН

Профессор кафедры "Макроэкономики" АГЭУ,
доктор географических наук

25-летие независимости Нагорного Карабаха и проблемы экономического развития. – Неотделимая часть Великой Армении – Арцах, 70 лет принудительно находившийся под властью, новоиспеченного Азербайджана, искусственно созданного всего лишь в 1918 году, общими усилиями всего армянского народа освободился и 2-го сентября 1991 года провозгласил себя как независимое государство.

После достижения независимости население Арцаха организовало свою государственность, избрало председателя страны, национальное собрание, составило правительство, организовало мощную армию для защиты Арцаха от азербайджанских хищников.

За короткий срок героический народ Арцаха с помощью Армении восстановил разрушенное хозяйство, промышленность, сельское хозяйство и другие отрасли.

Сегодня все области социально-экономического хозяйства Арцаха действуют и успешно развиваются.

Арцах, сегодня как государство, интересуется руководителями, ученых, искусствоведов, а также туристов многих стран.

Ключевые слова: Арцах, Карабах, независимость, государственность, политическая безопасность, республика, ресурсы, окружающая среда, региональное развитие.

R11, R13, L59, Q28, Q51, Q56

SERGEY MELKUMYAN

Professor at the Chair of "Macroeconomics" at ASUE,
Doctor of Geographical Sciences

The 25th Anniversary of NKR Independence and Economic Development Issues. - Artsakh, which was the 10th province of the Great Hayk, since 1918 had been under the yoke of the newly created Azerbaijan and due to the common efforts of the whole nation was liberated and on the 2nd of September, 1991 was declared as an independent state. After the independence the Artsakh population with the support of Armenia very quickly organized their all government agencies, elected President and the National Assembly, formed the government, regulatory bodies and the powerful army of defense.

The state bodies very quickly started solving the crucial issues of reconstruction and development in all sectors, regions damaged by the barbaric Turk-azerbaijanis.

Today, all socio-economic spheres of Artsakh are developing rapidly.

Artsakh today as a nation interests many heads of states, scientists, artists, especially a large number of tourists.

Key words: Artsakh, Karabakh, independence, statehood, political safety, republic, resources, environment, regional development.

R11, R13, L59, Q28, Q51, Q56